

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ



Մարզկենտրոնը՝

ք. Գավառ

Տարածաշրջանները

- Գավառ
- Սևան
- Մարտունի
- Վարդենիս
- Ճամբարակ

Քաղաքները՝

- Գավառ
- Ճամբարակ
- Մարտունի
- Սևան
- Վարդենիս

Տարածքը	5 349 քառ. կմ
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	18.0 %
Համայնքներ, 2019 թ. տարեկգրի դրությամբ	57
Քաղաքներ	5
Գյուղեր	93
Բնակչության թվաքանակը 2019թ. տարեկգրի դրությամբ	228.3 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	67.0 հազ. մարդ
գյուղական	161.3 հազ. մարդ
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	7.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	29.3 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	345 618.2 հա
այդ թվում՝ վարելահողեր	81 578.5 հա

Գեղարքունիքը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևելքում՝ շրջապատելով Սևանա լիճը:

Մարզը հյուսիսից սահմանակից է Լոռու և Տավուշի մարզերին, արևելքից՝ պետական սահմանով, սահմանակից է Ադրբեջանին, հարավից՝ Վայոց ձորի մարզին, հարավ-արևմուտքից՝ Արարատի մարզին և արևմուտքից՝ Կոտայքի մարզին:

Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում է 115 կմ, արևմուտքից արևելք՝ 85 կմ, ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (Ձորավանք գյուղ, 1 325 մ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը (3 598 մ):

Բարձր լեռներն են Սպիտակասարը (3 555 մ), Վարդենիսը (3 522 մ), Գեղասարը (3 446 մ): Ամենաերկար գետերն են Արգիճին (51 կմ), Գավառագետը (47 կմ) և Մասրիկը (45 կմ):

Ամենամեծ լիճը Սևանա լիճն է (1 279.18 կմ², բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1 900.57 մ), համեմատաբար փոքր լճերից են Աժդահակի և Արմաղանի խառնարանային լճերը՝ մինչև 50 մ տրամագծով և 15 մ խորությամբ:

Գեղարքունիքի մարզում է գտնվում Սևանա լիճը, որը ոչ միայն մարզի, այլ նաև հանրապետության համար ունի առանձնահատուկ կարևորություն: Այն Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի ամենամեծ ավազանն է: Լիճն էական ազդեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա:

Մարզի տարածքում է գտնվում «Սևան» ազգային պարկը (կազմավորվել է 1978թ.): Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակից ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 150.1 հազ.հա, որից 24.9 հազ.հա՝ առափնյա ցամաքային տարածքներ են: Լիճը շրջափակված է Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների լանջերով: Այստեղ պահպանվել են բույսերի 1 600 և կենդանիների 330 տարատեսակներ:

Մարզում են գտնվում բազմաթիվ հանքավայրեր, որոնցից են ոսկու, դոլոմիտի, բազալտի, ավազի, հրաբխային տուֆի հանքավայրերը: Շահագործվող հանքավայրերից մի մասին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող հանքաքարի զգալի մասը:

Մարզի տարածքով անցնում է Երևան - Սևան -Դիլիջան հանրապետական նշանակության մայրուղին: Գործում է Սելիմի լեռնանցքով անցնող «Հարավ-Հյուսիս» մայրուղին:

2018թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան հատվածների ընդհանուր ծավալում կազմել են.

➤ արդյունաբերություն՝	3.3 %,
➤ գյուղատնտեսություն՝	13.2%,
➤ շինարարություն՝	3.5 %,
➤ մանրածախ առևտուր՝	2.0 %,
➤ ծառայություններ՝	0.9 %:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, հատկապես հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները:

Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Կարևոր նշանակություն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդամթերքի արտադրությունը:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզկենտրոն **Գավառը** (2019թ. տարեսկզբին՝ 18.4 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 92 կմ հեռավորության վրա: Քաղաքը նախկինում հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր, սակայն մի շարք խոշոր գործարանների աշխատանքների դադարեցման պատճառով արդյունաբերական արտադրանքի թողարկումն էական կրճատվել է:

Այժմ տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է:

Սևան քաղաքը (2019թ. տարեսկզբին՝ 19.0 հազ. բնակիչ, Երևանից 66 կմ հեռավորությամբ) գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին: Տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը զբոսաշրջությունն է:

Մարտունի քաղաքը (2019թ. տարեկզբին՝ 11.5 հազ. բնակիչ) գտնվում է Սևանա լճի հարավ-արևմտյան ափին (Երևանից 130 կմ հեռավորության վրա): Տնտեսության գլխավոր ճյուղն արդյունաբերությունն է, թեև վերջին տարիներին արձանագրվել է թողարկ-վող արտադրանքի ծավալների զգալի կրճատում:

Վարդենիս քաղաքի (2019թ. տարեկզբին՝ 12.5 հազ. բնակիչ, Երևանից 168 կմ հեռավորության վրա) առաջատար ճյուղն արդյունաբերությունն է: Ընդլայնման մեծ հեռանկարներ կան հատկապես հանքավայրերի շահագործման և գյուղատնտեսական մթերքի վերամշակման ուղղություններում:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

Ճամբարակ քաղաքի (2019թ. տարեկզբին՝ 5.6 հազ. բնակիչ) տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է (Երևանից 119 կմ հեռավորության վրա): Արդյունաբերությունը համեմատաբար թույլ է զարգացած:


Կրասնոսելսկի տարածաշրջանում է գտնվում մարզի բնական անտառների ավելի քան 90%-ը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԲՈՒՐԳԸ,
2019թ. հունվարի 1-ի դրությամբ

տղամարդ - 113 721

տարիք

կին - 114 535



ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը				
	2014	2015	2016	2017	2018
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	498	551	532	499	518
այդ թվում՝					
խանութներ	288	333	339	319	351
կրպակներ	144	121	98	94	87
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	2	2	1	1	-
սպառողական ապրանքների շուկաներ	2	2	2	2	2
առևտրի այլ օբյեկտներ	62	93	92	83	78

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը				
	2014	2015	2016	2017	2018
Պետական նախադպրոցական	44	42	42	39	47
Պետական հանրակրթական	126	126	126	126	126
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	15	15	15	16	19
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹	3	3	4	4	4
Պետական միջին մասնագիտական ուսումնական	8	7	7	7	7
Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	1	1	1
Պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1

ՔԱՂԱՔՆԵՐ

Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ²
Գավառ	18 358
Սևան	19 012
Մարտունի	11 553
Վարդենիս	12 453
Ճամբարակ	5 602

¹ Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

² Հայաստանի Հանրապետության քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացված է Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի հիմքով վարվող բնակչության ընթացիկ հաշվառմամբ:

ԳՅՈՒՂԵՐ

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ¹
Գավառի տարածաշրջան		
1	Բերդկունք	292
2	Գանձակ	4316
3	Գեղարքունիք	1 863
4	Լանջաղբյուր	2 587
5	Լճափ	1 160
6	Ծաղկաշեն	541
7	Ծովագարդ	2 202
8	Կարմիրգյուղ	6 291
9	Հայրավանք	795
10	Նորատուս	6 144
11	Սարուխան	8 370
Կրասնոսելսկի տարածաշրջան		
1	Աղբերք	265
2	Այգուտ	844
3	Ճապկուտ	-
4	Անտառամեջ	161
5	Արտանիշ	614
6	Արծվաշեն	-
7	Գետիկ	435
8	Դայրաբակ	552
9	Դրախտիկ	1 000
10	Թթուջուր	1 038
11	Ծափաթաղ ²	312
12	Կայավան	105
13	Բարեպատ	47
14	Ձորավանք	151
15	Մարտունի	540
16	Շողակաթ (Շորժա)	563
17	Զիլ	665
18	Վահան	1 040
Մարտունու տարածաշրջան		
1	Աստղաձոր	4 567
2	Արծվանիստ	3 204
3	Գեղհովիտ	6 143
4	Նշխարք	-
5	Լեռնակերտ	285
6	Երանոս	5 594
7	Զոլաքար	6 843
8	Լիճք	5 277
9	Ծակքար	2 868
10	Ծովասար	2 987
11	Ծովինար	4 655
12	Ձորագյուղ	4 743

¹ ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 955 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի, ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են Արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման և Ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա: Ընդ որում, վերջինս վերագնահատված է ՏՏԿԱՀ արդյունքներով ստացված միգրացիայի տվյալներով (շեղումը՝ 01.01.2019թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +11.6%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղերի միջև տվյալ տեղեկատվության գրանցման, փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

² Նախկինում եղել է Վարդենիսի տարածաշրջանում :

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ¹
13	Մադինա	1 124
14	Ներքին Գետաշեն	8 821
15	Վաղաշեն	4 137
16	Վարդաձոր	2 817
17	Վարդենիկ	8 482
18	Վերին Գետաշեն	4 562
Մեանի տարածաշրջան		
1	Գագարին	1 915
2	Գեղամավան	1 804
3	Դրմաշեն	2 818
4	Զովաբեր	1 494
5	Լճաշեն	4 848
6	Ծաղկունք	1 023
7	Ծովագյուղ	4 415
8	Նորաշեն	437
9	Չկալովկա	521
10	Սեմյոնովկա	241
11	Վարսեր	2 028
Վարդենիսի տարածաշրջան		
1	Ազատ	141
2	Ախարաձոր	366
3	Ակունք	4 056
4	Այրք	359
5	Ավազան	185
6	Արեգունի	313
7	Արփունք	503
8	Գեղամաբակ	128
9	Գեղամասար	1 102
10	Գեղաքար	155
11	Դարանակ	182
12	Զառիվեր	-
13	Լճավան	568
14	Լուսակունք	1 546
15	Խաչաղբյուր	1 224
16	Ծովակ	2 718
17	Կախակն	412
18	Կարճաղբյուր	2 327
19	Կուրթ	197
20	Կուտական	233
21	Մաքենիս	486
22	Մեծ Մասրիկ	2 699
23	Ներքին Շորժա	71
24	Նորաբակ	275
25	Նորակերտ	868
26	Շատգրեք	460
27	Շատվան	516
28	Զաղացաձոր	145
29	Սոթք	990
30	Վանևան	344
31	Վերին Շորժա	101
32	Տորֆավան	468
33	Տրետուք	255
34	Փամբակ	444
35	Փոքր Մասրիկ	741

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2018թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10 000	5 010	4 990
Ծնվածներ, մարդ	118	53	65
Մահացածներ, մարդ	77	37	40
Ամուսնություններ	43	X	X
Ամուսնալուծություններ	5	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	32.7	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	167	79	88
հանրակրթական	1 278	589	689
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	127	77	50
նախնական մասնագիտական (արհեստագործական)	23	3	20
միջին մասնագիտական	53	27	26
բարձրագույն մասնագիտական	48	24	24
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	31 417
Մարզիկներ, մարդ	70	4	66
Զբաղվածներ, մարդ	2 701	1 165	1 536
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	123	104	19
բժիշկներ	15
միջին բուժանձնակազմ	36
Գործազուրկներ, մարդ	272	73	199
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 365	804	561
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	520	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	11 071
թատրոն	154
համերգ	-	-	-
թանգարան	142
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	39	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	20	X	X
միջին ծանրության	14	X	X
ծանր	4	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են: